

## **Երգ- Երաժշտության դերը Հ.Բ.Ը.Միության Զարուկեան Վարժարանին մէջ**

Այսօր շատ ազգեր կրնան հպարտութեամբ ներկայացնել իրենց երիտասարդ երաժիշտ կատարողներուն եւ արուեստագէտներուն, բայց քիչերն են, որ կրնան հպարտանալ իրենց դարաւոր պատմական զարգացում ապրած եւ այդ ճանապարհին տարբեր արուեստի դարաշրջաններ բիրեղացուցած յայտնի դէմքերով: Մեր ազգը օժտուած է բարձր երաժշտական յատկութիւններով: Երգն ու երաժշտութիւնը միշտ եղած են մեր ժողովուրդի անբաժան մասը. նրա թէ՛ ուրախութեան եւ թէ՛ դժուար պահերուն: Մենք սերունդէ սերունդ ժառանգած ենք երաժշտութեան եւ հոգու միասնութիւնը: Այս է պատճառը, որ մեր հայ ազգային վարժարաններ տարբեր մօտեցում կը ցուցաբերեն երգին եւ երաժշտութեանը: Բանաւք Հ.Բ.Ը.Մ. Զարուկեան վարժարանի դռները հեռուէն ականատես ըլլալով անոր երգ-երաժշտութեան հանդէպ ունեցած ինքնատիպ կեցումաձքին: Այս դասընթացը ունի իր առանձնայատուկ կարեւորութիւնը երեխաներու դաստիարակչութեան մէջ: Վարժարանի ամենափոքրիկ սաները՝ Ծիլիկ, Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարանները իրենց տարիքին համապատասխան, զգուշութեամբ ընտրուած երգերու ուսուցման միջոցով կը զարգացնեն թէ երաժշտական ընդունակութիւնները, թէ իրենց բառապաշարը: Երգերը հնարաւորութիւն կու տան մանուկներուն զարգացնել խօսակցական կարողութիւնները՝ իրացնելով նոր բառեր, հասկնալով անոնց իմաստը եւ վերջապէս երգի միջոցով օգտագործել նախադասութիւններու մէջ: Մեծ է մեր փոքրիկներուն ուրախութիւնը այս դասաժամերուն մէջ: Անոնք կ'ապրին երգելու եւ երգը կերպարներով վայելելու բաւականութիւնը: Անոնց կ'ընձեռնուի նաեւ հնարաւորութիւն ծանօթանալու տարբեր մանկական երգերու եւ երգիչներու հետ ձայնագրութիւններու եւ տեսաֆիլմակներու միջոցով: Նշուած գործողութիւնները փոքրիկներուն մէջ կը ստեղծէ երաժշտութեան խօսակցական կարողութիւններու զարգացման եւ հոգեկան կերպարներու ձեւավորման ամբողջական կապ:

1-6 դասարաններու աշակերտները ունին աւելի խորացուած ծրագիր:

Նոտանաճանաչութիւն, ծանօթութիւն արուեստի տարբեր դարաշրջաններու պատկանող տարբեր կոմպոզիտորներու եւ անոնց ստեղծագործութիւններու հետ: Հնարաւորին չափով աւելի մօտենալ մեր հայ երգ-արուեստի մշակոյթին, երաժշտական հարուստ պաշարին: Մեր կարեւորագոյն խնդիրներէն մէկն ալ այն է, որ տալով լաւ գիտելիքներ, ընդլայնելով սէրը դէպի երաժշտութիւնը երեխաներու մէջ կ'ուզենք մեծցնել կարողութիւնը ժամանակակից երաժշտութեան ճիշդ ընտրութեան մէջ:

Մեր աշակերտութեան բարձր հոգեկան արժանիքներով դաստիարակութեան յաջողութիւններու պատճառներէն մէկն ալ, տարբեր առիթներով կազմակերպուող հանդէսներով լեցուն կեանքն է: Այն բազմակողմանի զարգացում կու տայ մեր սաներուն: Ելոյթներու պատրաստուելու այս փորձերը, ուսուցչի պահանջները

իրականացնելու աշխատանքները իրապէս կը մօտեցնեն իրաքանչիւր աշակերտի դէպի  
իրական արուեստին:

Զարուկեան Վարժարանի ամբողջ ուսուցչական կազմը գլխաւորութեամբ Տիկ. Լիւսի  
Յոբեանի իւրայատուկ մօտիկ կեցուածք մը ունին դէպի արուեստն ու երաժշտութիւնը,  
ըլլալով գաղափարական համամիտ եւ առողջ յարաբերութիւններու միջավայր մենք  
կ'ապահովենք աշխատանքի ակնյայտ արդիւնքներ: Սահմանած ենք պահանջներու  
որոշակի չափանիշ եւ կը ձգտինք աւելիին, չբաւարուելով յաջողութիւններէն:

Տիկ. Հոփսիսիմէ Տէմիրճեան